ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ
ՈՐՈՇՈՒՄ

N 658-Ա

10 նոյեմբերի 2026 թ.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԱՅԻՆ ԵՆԹԱԿԱՅՈՒԹՅԱՆ ԱՌՈՂՋԱՊԱՀԱԿԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՏՆՕՐԵՆՆԵՐԻ ԹԱՓՈՒՐ ՊԱՇՏՈՆՆԵՐԸ ԶԲԱՂԵՑՆԵԼՈՒ ՀԱՄԱՐ ԲԱՑ ՄՐՑՈՒՅԹՆԵՐ ՀԱՅՏԱՐԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Կառավարչական իրավահարաբերությունների կարգավորման մասին» օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի ու 19-րդ հոդվածի, «Տարածքային կառավարման մասին» օրենքի 5-րդ հոդվածի 3-րդ մասի և 14-րդ հոդվածի դրույթներով ու հիմք ընդունելով Կառավարության 2022 թվականի փետրվարի 3-ի N 129-Ն որոշմամբ հաստատված «Առողջապահական պետական ոչ առևտրային կազմակերպությունների և հարյուր տոկոս՝ պետությանը սեփականության իրավունքով պատկանող բաժնեմաս ունեցող առողջապահական բաժնետիրական ընկերության գործադիր մարմնի ընտրության (նշանակման) մրցույթի կարգի» 1-ին, 2-րդ գլուխների պահանջները

որոշում եմ՝

1. Հայտարարել Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզային ենթակայության առողջապահական պետական ոչ առևտրային կազմակերպությունների տնօրենների թափուր պաշտոնները զբաղեցնելու համար բաց մրցույթները:

2. Հաստատել Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզային ենթակայության առողջապահական պետական ոչ առևտրային կազմակերպությունների տնօրենների թափուր պաշտոնները զբաղեցնելու համար բաց մրցույթների անցկացման ժամանակացույցը՝ համաձայն հավելվածի:

3. Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզպետի աշխատակազմի առողջապահության և սոցիալական ոլորտի հարցերի, անձնակազմի կառավարման, փաստաթղթաշրջանառության և հասարակայնության հետ կապերի վարչություններին՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով կազմակերպել մրցույթի նախապատրաստական աշխատանքները:

4. Սույն որոշման կատարման հսկողությունը վերապահել Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզպետի տեղակալ Ջանիկ Բազեյանին:

10.11.2026

X

ՎԱՀԱՆ ՉԱՐՈՅԱՆ

Подписано: ZAROYAN VAHAN 3103860463

ՄԱՐԶՊԵՏԻՆ ՓՈԽԱՐԻՆՈՂ

ՎԱՀԱՆ ՉԱՐՈՅԱՆ
ք.Գավառ

Հավելված
Հայաստանի Հանրապետության
Գեղարքունիքի մարզպետի
2026 թ. Նոյեմբերի 10-ի
N658- Ա որոշման

Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզային ենթակայության առողջապահական պետական ոչ առևտրային կազմակերպությունների տնօրենների թափուր պաշտոնը զբաղեցնելու համար բաց մրցույթների անցկացման ժամանակացույց

1. «Լճափի ԱԱՊԿ» ՊՈԱԿ	թեստավորում՝	31.03.2027թ., ժամը՝ 09:00-ին
	հարցազրույց՝	02.04.2027թ., ժամը՝ 09:00-ին
2. «Ձորագյուղի ԲԱ» ՊՈԱԿ	թեստավորում՝	20.04.2027թ., ժամը՝ 11:00-ին
	հարցազրույց՝	22.04.2027թ., ժամը՝ 11:00-ին
3. «Կարճաղբյուրի ԱԱՊԿ» ՊՈԱԿ	թեստավորում՝	04.05.2027թ., ժամը՝ 11:00-ին
	հարցազրույց՝	06.05.2027թ., ժամը՝ 11:00-ին

ՀՀ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ

Ստորագրող
ՍԻՄՈՆ ՄԱՆՈՒԿՅԱՆ
2201650098

2026-11-09 11:29:02 GMT+4
Հավաստված է ԷԿԵՆԳ-ի կողմից

ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ՝

ՍԻՄՈՆ ՄԱՆՈՒԿՅԱՆ